Կարծիք

Մարիամ Ժիրայրի Առաքելյանի «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» / անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվել են մեդիակրթության և մեդիագրագիտության էությունն ու խնդիրները իրավագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացում: Ատենախոսը փորձ է արել բացահայտել իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում մեդիակոմպետենցիայի ձևավորման և զարգացման դժվարությունները, մշակել համապատասխան ռազմավարությունների կիրառմամբ մեդիակոմպետենցիայի զարգացման մեթոդական համակարգ:

Ատենախոսն ուսումնասիրել է արդիական լեզվաբանական, մանկավարժական, մեթոդական գրականություն, հստակեցրել է մեդիատեքստերի ընտրության սկզբունքները, դրանց շուրջ աշխատանքի ռազմավարությունը, մշակել է մեթոդական համակարգ, որի արդյունավետությունը հիմնավորել է փորձարարական ուսուցման ընթացքում:

Հետազոտության նպատակը հստակ է: Խնդիր է դրվում ձևավորել իրավագիտության ֆակուլտետի ուսանողների մեդիակոմպետենցիան մեդիատեքստերի ընթերցանության միջոցով:

Ատենախոսն ուսումնասիրել է մեդիատեքստի ընթերցանության տեխնոլոգիաները և մշակել է մեդիատեքստի ընթերցանության կարողությունների զարգացման մեթոդական համակարգ:

Հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում, ձևակերպված են ճիշտ, բխում են նրա առաջադիր խնդիրներից::

Հետազոտության ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին **«Լեզվակրթության քաղաքականության ժամանակակից միտումները»** գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է լեզվակրթության հիմնական սկզբունքները, մեթոդաբանական հիմքերը, զարգացման միտումները:

Առաջին գլխի **«Մուլտիմեդիական տեխնոլոգիաների օգտագործման առկա վիճակը իրավագիտական կողմնորոշման դասընթացներում»** առաջին ենթագլխում ատենախոսը սահմանում է «մուլտիմեդիա» հասկացությունը, բացահայտում է մուլտիմեդիայի կիրառման հնարավորությունները, ինտեգրված բնույթը, ներկայացնում է հարցման միջոցով ստացած մուլտիմեդիական կրթության կիրառման արդի վիճակը:

Առաջին գլխի **«Տեղեկատվական -հաղորդակցական տեխնոլոգիաների /ՏՀՏ/ դիդակտիկական ներուժը»** երկրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է ՏՀՏ գործառույթները, դրանց ներկայացման արդյունավետ մեխանիզմները:

Առաջին գլխի **«Մեդիակրություն և մեդիագրագիտություն»** երրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է մեդիակրթության նպատակը, խնդիրները, գործառույթները:

Առաջին գլխի **«Տեղեկատվական և համակարգչային գրագիտություն»** չորրորդ ենթագլխում ատենախոսը սահմանում է «տեղեկատվական գրագիտություն» հասկացությունը, հստակեցնում այն հմտությունները, որոնք ձևավորվում են տեղեկատվական գրագիտություն ստանալու ընթացքում:

Երկրորդ **«Ուսանողների մեդիակրթության ձևավորման դժվարությունների անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում»** գլխում հեղինակը ներկայացնում է մեդիատեքստերի էության ժամանակակից մոտեցումները:

Երկրորդ գլխի **«Մեդիատեքստերի էության բացահայտման ժամանակակից մոտեցումներ»** ենթագլխում ատենախոսը դասակարգում է մեդիայի տեսակները, սահմանում է «մեդիատեքստ» եզրույթը, բացահայտում է մեդիատեքստի ընթերցանության առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի **«Ուսանողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստավորում»** երկրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է թեստավորման նպատակը. որոշել մեդիակոմպետենցիայի տիրապետման և մեդիատեքստերի բովանդակության ընդհանուր ըմբռնման մակարդակները, առաջադրանքների տեսակները, հայտորոշիչ թեստի արդյունքների ստուգման չափանիշները, ամփոփել հայտորոշիչ թեստի արդյունքները՝ սահմանելով ուսանողների մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները:

Երրորդ «**Մեդիակոմպետենցիայի ձևավորման մեթոդական համակարգի մշակում**» գլխում ատենախոսը ներկայացնում է ընթերցանության մոդելը, դրա հիմքում ընկած սկզբունքները:

Երրորդ գլխի «Ընթերցանության ուսուցման մոդելի հիմքում ընկած սկզբունքները» առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացնում է տվյալ մոդելի հիմնավորման մեթոդաբանական մոտեցումները, , բացահայտում ուսումնական գործընթացի մեդիականացման առանձնահատկությունները:

Երրորդ գլխի «**Մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերենի ուսուցման մշակման մեթոդաբանական հիմքերը**» երկրորդ ենթագլխում ատենախոսը դիտարկում է ընթերցանությունը որպես հաղորդակցական-ճանաչողական գործունեություն, հստակեցնում է մեդիատեքստերի ընթերցանության կարողությունները, մեդիառեսուրսների գնահատման կարողությունները, մշակում է ընթերցանության ռազմավարություններ, շեշտը դնելով որոնողական ընթերցանության վրա:

Երրորդ գլխի «**Ռազմավարություններ՝ ուղղված մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացմանը**» երրորդ ենթագլխում ատենախոսը սահմանում է «ռազմավարություն» հասկացությունը, ներկայացնում է վերջնարդյունքին հասնելու ռազմավարական քայլերը, տեխնիկական-լեզվական վարժությունները, մեդիառեսուրսի գնահատման վարժությունները, դասակարգում է ընթերցանության կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարությունները:

Երրորդ գլխի «**Մշակված մեթոդական համակարգի փորձարկում և արդյունքների վերլուծություն**» չորրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է փորձարարական ուսուցման նպատակը, վայրը, փորձարկման նյութը, փորձարարական ուսուցման արդյունքները, մշակված մեթոդական համակարգը և եզրակացությունները:

Ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ թերացումներ և վրիպումներ, որոնք կարելի է ուղղել հետագա ստեղծագործական գործունեության ընթացքում:

1. Մեթոդաբանական հիմքը ներկայացնում են որոշ աշխատանքներ, որոնց մեթոդաբանությունը հնարավոր չէ որոշել ըստ հետազոտության վերնագրերի:
2. Պաշտպանությանը ներկայացվող դրույթներում ոչ մի խոսք չկա իրավագիտական անգլերենի դասընթացի մասին:

3. Պաշտպանությանը ներկայացվող դրույթների երկրորդ և երրորդ կետերը ընդգծում են նույն գաղափարը և հաստատում են բավականին հայտնի իրողություն մեդիակոմպետենցիայի գործառույթների մասին:
4. Քննության առնելով մոտիվացիայի ձևավորման հիմնախնդիրը, ատենախոսը չի նշում թե ինչ մոտիվացիայի տեսակ է դարձել քննության առարկա :

Ընդհանուր առմամբ իրականացվել է բավականին հետաքրքիր, ամբողջական հետազոտություն, որի բոլոր բաժինները տրամաբանորեն և բովանդակային առումով իրար հետ փոխկապակցված են: Լեզուն և ոճը բավարարում են ներկայացվող պահանջներին:

Կարելի է պնդել, որ **Մարիամ Ժիրայրի Առաքելյանի «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման» / անգլերեն լեզու/** թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, գիտական հետազոտություն է, ամբողջովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 – **Դասավանդման և ուսուցման** մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Ընդդիմախոս՝
մ.գ.թ., դոցենտ՝ Ա. Ա. Ոսկանյան

Ստորագրությունը հաստատում է
ԵՊՀ գիտքարտուղար՝ պ.գ.թ, ասիստենտ Լ. Հովսեփյան